

**ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ  
ԿՈՆԴԱԿԸ ԶԻՎԱՆ ԳԱԼՖԱՅԻՆ  
«Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՇՔԱՆՇԱՆՈՎ  
ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**ԳԻՐ ՆԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՆԱՏԱՆԱՑ  
ԱՌ ՍԻՐԵՅԵԱՆ ՈՐԻՒՆ ՄԵՐ ԵՒ ՆԱՐԱԶԱՏ ԶԱՄԱԿՆ  
ՄԱՅՐ ԱԹՈՒՈՅ ՍՐԲՈՅ ԷԶՄԻԱԾՆԻ  
ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ՃԻՎԱՆ ԳԱԼՖԱ,  
ՈՐ Ի ԳՈՍԹԱՎ ՄԵՍԱ, ԱՄՆ**

Յարգարժան պրն Ճիվան Գալֆա,

Նայրապետիս համար անկեղծ ուրախություն է, որ առիթ ունենք Մեր օրհնությունը յղելու Ձեզ եւ գնահատելու մեծազնիւ հայորդոյ գործերով վկայուած աննուազ սէրը հանդէպ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին ու հարազատ ժողովուրդը:

Ձեր վաստակը արդիւնաշատ է յարկապէս Գոսթա Մեսայի Սուրբ Մարիամ Աստուածածին եկեղեցու պայծառութեան եւ համայնքային կեանքի կազմակերպման նուիրական գործում: Առ Աստուած եւ առ հայրենին ունեցած Ձեր նախանձատր հաւաքով եւ մեծագումար նուիրաբանութիւններով Դուք անփոխարինելի ծառայութիւն բերեցիք Եկեղեցու շինութեան աստուածահաճոյ գործում՝ Ձեր անձնական օրինակով խրախուսելով նաեւ այլ հայորդիներին: Այսօր շնորհիւ Ձեր եւ Ձեզ պէս նուիրեալ ու յանձնառու հայորդեաց ազնիւ ջանքերի՝ Սուրբ Մարիամ Աստուածածին եկեղեցին իր շնորհաբաշխ դռներն է բացել հաւաքատուր մեր զաւակների առջեւ՝ արժանացնելով նրանց աստուածային օրհնութեան եւ նպաստելով նրանց ազգային ու հոգեւոր կեանքի անխաթար պահպանմանն ու զօրացմանը:

Նամայն մեր ժողովրդի հոգեւոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից յղում ենք Ձեզ Մեր բարեմաղթանքները եւ, ընդառաջ Գերաշնորհ Տ. Վաչէ արքեպիսկոպոս Յովսէփեանի ազնիւ խնդրանքին, ի գնահատութիւն Ձեր եկեղեցաշէն բազմարդիւն ծառայութեան, Նայրապետական այսու Կոնդակով շնորհում Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

**ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ**

պապուոյ բարձրագոյն շքանշանը:

Վարահ ենք, որ հայրենապաշտ ոգով ու եկեղեցանուէր գործերով պիտի շարունակէք Ձեր ծառայութիւնը Տիրախնամ մեր Եկեղեցուն եւ հաւաքատուր ժողովրդին:

Ի խորոց սրտի Մեր աղօթքն է, որ Ամենախնաման Աստուած Իր Աջի հովանու ներքոյ պահի ու պահպանի Ձեզ եւ Սուրբ Գրիգոր Լուսաւորչի բարեխօսութեամբ պարգեւի Ձեզ քաջատոյջ երկար կեանք, գործոց յարանորոգ յաջողութիւններ եւ ամենայն բարիք:

*Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ընդ ձեզ եւ ամենեւեւեան. ամէն:*

Օրհնութեամբ՝

**ԳԱՐԵԳԻՆ Բ**

**ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՍԵՆԱՅՆ ՆԱՅՈՑ**

Տուաւ Կոնդակս ի 1-ն Մայիսի  
Յամի Տեառն 2003 եւ ի թուին Հայոց ՌՆԾԲ  
ի Մայրաքաղաք Սրբոյ Էջմիածնի  
ընդ համարաւ 161